



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

09.01.2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն **Աշոտ Ղահրամանյանին**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն Ղահրամանյան,
«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման վերաբերյալ կառավարության տրամադրած աջակցության մասին: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2016թ. որքա՞ն գումար է հատկացրել Արմավիրի մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2016թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են: Եթե ոչ, ապա որ համայնքներում և ինչ պատճառով:

Գանխավ շնորհակալություն

Դիմող՝ **Գրիշա Բալասանյան**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Կնիք թիվ 50-17
09 01 2017թ.